խմբագրին, նոյն տարւայ համարներից մինի մէջ մեղադրեց «Մշակի» խմբագրին ասելով, թէ այն նամակները կեղծ են, թէ այն նամակները ոչ թէ ուղարկված են Ախալքալաքից, այլ շինված են խմբագրատան մէջ և թէ անբերրի Ախալքալաքը չէր կարող յանկարծ այդպիսի երկուորեակներ ծնել:

Այն ժամանակ կարդալով այդ մեղադրանքը «Մշակի» խմբագրատան դէմ, ես ուղարկեցի «Մըշակին» մի նամակ հրատարակելու համար թէ սխալ է «Մեղուի» կարծիքը և թէ այն նամակները իմ գրածներն էին, և ուղարկված էին «Ախալքալաքից»: Բայց «Մշակը» այն ժամանակ չը տպեց իմ նամակը, այլ իր 1874 թիւ № 41-ի խմբագրական պատասխանների մէջ տպեց հետևեալը. «Ախալքալաք Յ. Յարութիւնեան. Մենք այն կարծիքի ենք, որ չարժէ այդ հայցը նորոգել: Նոքա միայն արհամարհանքի արժանի են:»

«Մեղուի» ներկայ տարւայ 73 №-ի մէջ կարդալով նորա խմբագրի, Գրիգոր Արծրունուն ուղղած բաց նամակը, որի մէջ պ. Սիմէօնեանցը մեղադրում է պ. Արծրունուն որպէս կեղծ նամակների շարադրող, ես ինձ պարտք եմ համարում նորից խնդրել «Մշակի» պ. խմբագրից հաճել տպելու այս նամակը, ապացուցանելու համար որ նա կեղծ նամակների հեղինակ չէ և յուսալ որ միւս նամակների հեղինակները ես, որոնց մասին է այժմ խօսքը, չեն զլանայ յայտնելու իրանց ազգանունները և ցոյց տալ թէ խաւարից երկիւղ չունեն:

Յարութիւն Յարութիւնեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, չորեքշաբթի, լինելու է Արծրունու թատրօնում վրաց ներկայացումն:

—

Յիշեցնում ենք որ վաղը, հինգշաբթի օր լինելու է Արծրունու թատրօնում պ. Կորգանովի կօնցերտը:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են հոկտեմբերի 6-ից հետևեալը: «Տասն և հինգ օրվայ ընթացքում վախճանվեցաւ տեղիս հայ Կօնսիստորիայի ատենապետը և այսօր էլ ատենադպիրը, երկուսն էլ մօտ 60 տարեկան հասակում: Ատենապետն էլ հիւանդ է:

—

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ որ Վեհափառ Կաթողիկոսի հրաւէրով Պ. Յ. Եղեան ընդունեց Էջմիածնի ճեմարանի տեսչի պաշտօնը, վասնորոյ նոր դիրեկտորին շուտով սպասում են Էջմիածնում: Մեզ մնում է միայն յիշել այն ժողովրդական առածը թէ՝ կճուճը ընկաւ, իր խուփը գտաւ:

—

ԹԷՕԴՈՍԻԱՅԻՑ մեզ հաղորդում են որ երևելի հայ նկարիչ Կ. Այվազօվսկի մտադիր է շուտով գնալ ճանապարհորդելու Կ. Պօլիս, Զմիւռնիա և գուցէ Թիւրքաց Հայաստանի ներքին գաւառները: Ցանկանում ենք մեր նկարչին կատարեալ աջողութիւն այս վերջինի վերաբերութեամբ.

—

Մեզ գրում են Նուխու գաւառի ՎԱՐԴԱՇԷՆ ուտիարնակ գիւղից, որ այդ գիւղի լուսաւորչադաւան ուտիացիները ա՛յ դէն հինգ տարի հարչարվելով իրանց քահանայ Տէր-Գալստի ձեռքում և զզվելով նրա խարդախութիւններից, որոնց դէմ շարունակ բողոքների վրա Էջմիածինը ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում, վճռել են Յունադաւանութիւնն ընդունել, Էջմիածնի կործանիչ անտարբերութիւնից ազատվելու համար: Դեռ կան մարդիկ, որոնք յանդգնում են ջատագով հանդիսանալ Մանկունու դիկտատորութեան: Լ

—

Հոկտեմբերի 11-ին, շաբաթ օր, երկրորդ բաժնի հաշտարար դատաւորի մօտ նշանակված էր Երևանեան և Եղիսաբէտպօլեան նահանգների ժողովրդական ուսումնարանների դիրեկտոր և ցէնզօրի պաշտօնակատար Բօգաչովի և «Тифлисскій Вѣстникъ», լրագրի նախկին խմբագիր իշխան Բէհբուտովի գործը: Պ. Բօգաչևը գանգատվում է իշխ. Բէհբուտովի վրա, որովհետև այս վերջինը ցէնզօրական կօմիտետին իր տուած բացատրութեան մէջ վիրաւորել էր Բօգաչևին: Որպէս մեղադրող դատարանին ներկայացաւ ցէնզօրական կօմիտետի լիազօր պ. Մելիք-Մեհրաբօվը: Իշխ. Բէհբուտով խնդրեց դատարանին յետաձգել գործի քննութիւնը մինչև հետևեալ վկաներին կանչելը՝ կովկասեան ցէնզօրական կօմիտէտի նախկին նախագահ Պուրցելաձէին, տպարանատէր պ. Մելիքովին և տպարանի կառավարիչ պ. Մեզվինովին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱ

—

«Գոլոս» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը:

Թիւրքաց կառավարութեան շրջաբերականը Դուլցինիօն խաղաղ ճանապարհով Չերնօգօրիային յանձնելու մասին յայտնում է, որ Բ. Դուռը «անելով այդ զոհաբերութիւնը ծովային ցոյցը դադարեցնելու համար», յոյս ունի, որ իր ընդունած վճռից յետոյ պետութիւնները կը դադարեցնեն ծովային ցոյցը: Սրանով Բ. Դուռը բացարձակ մերժում է իր նախկին յամառութեան և վերջապէս Դուլցինիօն զիջելու իսկական պատճառները: Կ. Պօլսի կառավարութիւնը մերժում էր Դուլցինիօի յանձնելը գլխաւորապէս այն պատճառով, որ իր առաջին զիջումով աւելի չը տայ պետութիւններին պահանջել նրանից զիջումներ նոյնպէս և միւս հարցերի վերաբերութեամբ: Բ. Դուռը այժմ համաձայնում է զիջումն անել, յուսալով, թէ Եւրոպան համոզված է, որ հասարակ «բարոյական ճնշումով» ոչինչ չէ կարող ստանալ Թիւրքիայից, ուրեմն նա կը հրաժարվի ստիպողական միջոցների գործադրելուց:

Կ. Պօլսի կառավարութեան յոյսի արդարացնելը աններելի սխալ կը լինէր: Թիւրքիան երբէք չէ ապացուցել իր «բարեհոգութիւնը», ինչպէս անուանում է այդ շրջաբերականը: Բ. Դուռը փախչելու պաշարումից և մաքսական տուրքերից զրկվելուց և այդ մասնաւոր զիջումով կամենում է ազատվել սպառնացող վտանգից: Եթէ Թիւրքաց կառավարութեան ցանկութեան համեմատ դադարեցնվի ծովային ցոյցը, այն ժամանակ ոչ թէ միայն Հայաստանի մէջ մտցնվելի վերանորոգութիւնների մասին չէ կարելի մտածել, այլ և յունական խնդիրը անվճիռ կը մնայ: Յունական սահմանական խնդրի հետ նոյնը կը պատահի, ինչ որ պատահեց Դուլցինիօի հարցի հետ: Պետութիւնները ստիպված կը լինեն նորից ներկայացնել գրութիւններ Բ. Դրանը, սպառնալ ստիպողական միջոցներով և նորից բանակցութիւններ սկսել յունական ջրերը միացեալ նաւատորմ ուղարկելու մասին:

Ծովային ցոյցը ստիպեց Թիւրքիային զիջել Դուլցինիօ այն պատճառով, որ պետութիւնները սպառնացին այդ հասարակ ցոյցը ստիպողական միջոցներով փոխարինել: Հասկանալի է ուրեմն, որ, ոչ թէ միայն չը պէտք է դադարեցնել ծովային ցոյցը, այլ պէտք է պահպանել այն սպառնալի բնաւորութիւնը, որ նա ունէր վերջին ժամանակներում: Մինչև որ Յունաստանին չեն յանձնված իրան վիճակված նահանգները, մինչև որ թէ Հայաստանի և թէ Թիւրքիայի քրիստոնէաբնակ այլ նահանգների մէջ վերանորոգութիւններ չեն մտցրած, միացեալ նաւատորմը պէտք է մնայ Եգէյեան ծովի մէջ և Փոքր-Ասիայի ափերի մօտ: Երբ Բ. Դուռը կը նկատի այն սարսափելի գործիքի հարևանութիւնը, որ նրան ստիպեց զիջել Դուլցինիօ, նա աւելի շուտ կը վերջացնի թէ յունական սահմանական խնդիրը և թէ Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների գործը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

—

Աթէնքից «Պօլիտ. Կորրեսպ.» լրագրին գրում են սեպտեմբերի 21-ից հետևեալը: Մինչև այժմ ծառայութեան են հրաւիրված տասը դասակարգի զինուորներ, այնպէս որ եթէ զինուորական ծառայութեանը բոլոր ենթարկվածները հաւաքվէին, յունական

դուրս է գալիս մի մարդ, մի հատիկ մարդ որ այնքան յանդուգն է, որ սկսում է քարոզել այդ հասարակութեանը իր պարտաւորութիւնը իր մայրենի լեզուն իմանալու,—ի հարկէ այդ մէկ մարդը անպիտան է: Հասարակութեան մեծ մասի մէջ ընտանեկան բռնաւորութիւն է տիրում,—շատ էլ լաւ է անում.... Յանկարծ մի մարդ յանդգնում է այդ հնացած բարք ու վարքերի վրա խօսել,—ի հարկէ այդ մարդն է մեղաւոր: Հասարակութեան հոգևորականների մեծ մասը տգէտ, մոլեռանդ է,—իրաւունք ունեն, ով կը լինի այնքան խենթ, որ մեղադրի նրանց այդ գեղեցիկ յատկութիւնների համար: Յանկարծ յայտնվում է մի մարդ, որ այդ յատկութիւնները խստութեամբ քննադատում է,—ի հարկէ այդ մարդը յանդուգն է: Հասարակութիւնը ատում է, հալածում է իր այլակրօն եղբայրներին, նրանց հայ չէ ընդունում,—կատարելապէս արդար է վարվում. մի՞թէ այն հայը հայ է, որ կրօնը փոխել է. միայն նա է հայը, որ կրօնով լուսաւորչական է, թէև չը գիտէր իր մայրենի լեզուն, թէև ատէր, արհամարհէր իր ազգութիւնը: Յանկարծ յայտնվում է մէկը որ քարոզում է սէր հայ-լուսաւորչականների և այլակրօն հայերի մէջ, հաւատացնում է որ ազգութիւնը լեզուի ու հայրենիքի մէջն է և ոչ թէ կրօնի մէջ,—ի հարկէ այդ տեսակ մարդը անպիտան է, վնասակար է ազգին: Հասարակութեան միջից այս ինչ կամ այն ինչ հարուստը հարստահարում է արհեստաւորին, չքաւորին,—շատ լաւ էլ է անում, աղքատի հախն է: Յանկարծ մի մարդ յանդգնում է ասել որ հարստահարելը վատ բան է,—ի հարկէ այդ տեսակ մարդը վնասակար է: Հասարակութիւնը համոզված է որ եթէ քեզ ծեծում, սպանում են, դու պէտք է համբերես,—հասարակութիւնը կատարելապէս իրաւացի է: Յանկարծ մի անձն սկսում է քարոզել անձնապաշտպանութիւն,—ի հարկէ այդ տեսակ անձն մեղաւոր է: Հասարակութիւնը անտարբեր է, ծոյլ է,—նա գովելի է: Յանկարծ մի մարդ ինքն աշխատել է ըսկսում և ուրիշներին աշխատանք է քարոզում,—ի հարկէ այդ տեսակ մարդ պախարակելի է....

Ուրեմն, ընթերցողը տեսնում է որ հասարակութիւնը արդար է, որ արդարութիւնը և իրաւունքը նրա կողմն է: Մի անպիտան մարդ դուրս եկաւ անմեղ հրեշտակներից բաղկացած ամբողջ հասարակութիւնից, ի հարկէ նրան պէտք է ատել, արհամարհել, հալածել, որպէս վնասակար մարդուն....

⁂

Մայրենի լեզուի վրա խօսելով, երևակայում եմ թէ ինչ կը լինէր, եթէ մի օտարազգու հետ պատահէր այդպիսի մի խօսակցութիւն: Դուք պատահում էք մի ֆրանսիացուն և հարցնում էք նրան:

—Հրամմեցէք ինչ ազգութեան էք պատկանում:

—Ես ֆրանսիացի եմ:

—Ուրեմն դուք կաթօլիկ էք:

—Ոչ, ես բողոքական եմ:

—Այդ անկարելի է, ֆրանսիացիները բոլորն էլ կաթօլիկ են, ուրեմն դուք ֆրանսիացի չէք:

Ֆրանսիացի անպատճառ կը ծիծաղէր ձեր երեսին և կը հեռանար ձեզանից ձեզ գիժ համարելով:

Բայց հայերի մէջ այդ տեսակ խօսակցութիւնը հնարաւոր է, այդպէս դատում են հայերի մէջ ոչ թէ միայն ռամիկ, անգրագէտ, տգէտ, խաւար մարդիկ, բայց և խմբագրապետները, համալսարանականները, հասարակութեան առաջադէմ իրանց համարող անձինք:

Կամ երևակայեցէք այդ տեսակ խօսակցութիւն:

—Դուք ինչ ազգութեան էք պատկանում:

—Ես անգլիացի եմ:

—Ախ, շատ ուրախ եմ. ասացէք խնդրեմ անգլիերէն լեզուն կարծեմ շատ հարուստ է....

—Չեմ կարող ասել, ես անգլիերէն լեզու չը գիտեմ, մինչև անգամ հաց բառը անգլիերէն լեզուով չը գիտեմ:

—Ուրեմն դուք անգլիացի չէք, պարոն, եթէ ձեր մայրենի լեզու չը գիտէք, իրաւունք կունենայիք պատասխանել այդ սուտ անգլիացուն, իրաւունք կունենայիք արհամարհանքով հեռանալ նրանից:

Իսկ հայի հետ այդ ամեն օր պատահում է:

Ինչքան հայ համալսարանականներից ինձ պատահել է լսել հետևեալ խօսքը:

—Ես հայերէն չը գիտեմ, և աւելորդ էլ համարում եմ սովորել այդ տեսակ լեզու:

Այդ տեսակ խօսք լսելով իր ազգի ինտելիգէնցիայից, ի հարկէ, մարդը ակամայ կը բացականչէ՛ ես շատ անգամ ամաչում եմ իմ հայ լինելուց, քանի որ ազգի ընտրեալ մասը այդ տեսակ է:

⁂

Մի քանի ժամանակ սրանից առաջ մի հայ բողոքական մտնում է մի հասարակութիւն իր երկու զաւակներով: Հայ լուսաւորչականները որոնց թւում և համալսարանականները ընդունում են նրանց օտարների տեղ և սկսում են խօսել նրանց հետ օտար լեզուով: Հայ բողոքականը պատասխանում է թէ օտար լեզուով խօսակցութեան մէջ վարժ չէ, և շարունակում է խօսել հայերէն լեզուով:

Այդ ժամանակ լուսաւորչականներից մէկը դիմելով օտար լեզուով մի լուսաւորչական կրթված տիկնոջ, ասում է նրան ականջին, բայց այնպէս որ ներկայ գտնվածներից շատերը կարողացան լսել:

—Իսկ ես կարծում էի, որ նա կրթված մարդ է:

Ուրեմն հայի կարծիքով իր մայրենի լեզուի իմանալը և օտար լեզուի չիմանալը անկրթութեան նշանն է:

Ով է աւելի լաւ հայը՝ կաթօլիկ, կամ բողոքական հայը, որի ընտանիքում մայրենի լեզու է տիրապետում, որ իր կնոջ և զաւակների հետ միշտ հայերէն է խօսում, կամ Թիֆլիսի լուսաւորչական տիկինը, որ դիմում է իր աշակերտ որդուն ասելով նրան, ի հարկէ օտար լեզուով:

—Վանիչկա, դու աշխատիր լաւ սովորել օտար լեզուները, թւաբանութիւնը և աշխարհագրութիւնը. իսկ եթէ հայերէն լեզուն ամբողջ կեանքդ էլ չը սովորես, մեծ կորուստ չէ:

Բայց այդ մայրը դարձեալ յանդգնում է իրան հայ համարել և հայ խմբագրապետն էլ նրան հայ է համարում, որովհետև նա լուսաւորչական կրօն է դաւանում:

Եւ կարծում էք, օրինակ, որ այդ մայրը բացառութիւն է Թիֆլիսում,—սխալվում էք. Թիֆլիսի գրեթէ բոլոր հայ մայրերը այդպէս են:

⁂

Առհասարակ հայ խմբագիրները և գրողները շատ խելօք մարդիկ են, բայց մանաւանդ շատ խելօք են Արարատեան երկրի հայ խմբագիրները և գրողները: Նրանք մինչև անգամ այնպիսի գիւտեր են անում, որոնք կը զարմացնեն ամբողջ քաղաքակիրթ աշխարհը:

Նրանցից մէկը այն ճշմարտութիւն է յայտնում թէ Աստուած ստեղծել է մի կրօն և մի լեզու, բայց երբ մարդիկ սկսեցին շատ մեղքեր գործել, Աստուած նրանց պատժեց և բաժանեց ամբողջ մարդկութիւնը այլ և այլ լեզուների, այդպիսով ստեղծվեցան ազգութիւններ: Ուրեմն Աստուծուն հաճելի լինելու համար, Աստուծուն չը բարկացնելու համար ամբողջ մարդկութիւնը պէտք է ձգտի մի ազգութիւն և մի եկեղեցի կազմելու:

Միւսը այն գիւտն է անում, որ ֆրանսիացին երբ կրօնը փոխում է, երբ նա, օրինակ, կաթօլիկութիւնից բողոքականութեան է անցնում, նա դարձեալ ֆրանսիացի է մնում, գերմանացին երբ կրօնը փոխում է, դարձեալ գերմանացի է մնում,—իսկ հայը երբ կրօնը փոխում է, նրա «արիւնն էլ փոխվում է կրօնի հետ միասին»: Ուրեմն հայը մի բոլորովին ուրիշ տեսակ ֆիզիօլօգիական կազմւածք ունի, քան թէ մնացած մահկանացուները. երբ հայը փոխում է իր կրօնը, ընդունում է, օրինակ, կաթօլիկութիւնը,—իսկոյն նրա երակներից հայոց արիւնը յայտնի չէ թէ որտեղ անհետանում է, նրա տիպը, նրա երեսի գծագրութիւնը, նրա քթի մեծութիւնը, նրա մազերի գոյնը փոխվում են և նրա երակների մէջ անմիջապէս սկսում է վազել իտալական արիւնը.... և ահա նա յանկարծ այլ ևս Կիրակոսեանի որդի չէ, Մարտիրոսեանի փեսայ չէ, այլ Պէտրարկայի ազգական է դառնում, Բօկաչիօյի հօրեղբայրը, կամ Լևոն XIII-ի եղբօրորդին.... Իսկ երբ որ հայը ընդունում է բողոքականութիւնը, նրա երակների մէջ անմիջապէս սկսում է վազել գերմանական կամ ամերիկական արիւնը և նա յանկարծ զգում է իրան Բիսմարկի թոռ, կամ Լինկօլնի աներոջ որդի....

Մի երրորդ գրող այն երևելի գիւտ է արել, որ մարդը երբ պսակվել է ուզում, միշտ մի կնոջ հետ պէտք է պսակվի, կինն էլ մարդու հետ, և երբէք չէ պատահում որ կինը կնոջ հետ պսակվի, կամ մարդը մարդու հետ. այդ վերջինը, տաղանդաւոր գրողի կարծիքով, ամբողջ պատմութեան մէջ միայն